

ТУНЯН В. Г., Легенды и были: охранка и Армения, XIX – нач. XX вв., Е., 2008, изд. “Чартарагет”, 132 с.

Լույս է տեսել ուշագրավ մի աշխատություն, որը լիովին արժանի է իր վրա բեռեռելու գիտական հասարակայնության ուշադրությունը: Այն վերհանում է Ռուսաստանյան կայսրության հատուկ ծառայությունների գործունեությունը, նրանց առնչությունները Հարավային Կովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի հետ: Հեղինակը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վալերի Թունյանը առաջին անգամ ցույց է տալիս, որ Անդրկովկասում Ռուսաստանի նվաճողական քաղաքականության ռազմավարական նպատակների իրագործման խնդրում էական դեր են խաղացել նաև ուժային կառույցները, ըստ այդմ էլ ընդհանրացրել է հատուկ ծառայությունների կատարած գործողությունների արդյունքները: Նրանց գործունեությունը միշտ դտնվել է գաղտնիության քողածածկույթի տակ, և այս ծանրակշիռ ու գիտատեսական առումով բարձրորակ աշխատանքի հրապարակումը ողջունելի է որպես նոր խոսք պատմագիտության բնագավառում:

Վ. Թունյանը կարևորում է Հայաստանի, հայկական հասարակական-քաղաքական և մտավորական շրջանների, կուսակցական կազմակերպությունների մասին Ռուսաստանի հատուկ ծառայությունների կողմից, կայսրության անվտանգությունը նկատառումներով պայմանավորված, երկրամասի կյանքին առնչվող անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը, ինչը Հնարավորություն էր տալիս հսկողություն սահմանել հասարակական-քաղաքական իրադարձությունների վրա և ընդունել համապատասխան որոշումներ: Այս առումով պրոֆ. Վ. Թունյանը ներկայացրել է բազմաթիվ նորահայտ վավերագրեր ու փաստաթղթեր, ինչպես՝ ՀՅ Դաշնակցության վերաբերյալ հետաքննչական գործի և Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի նահանգային ժանդարմական վարչությունների նյութերը:

Վ. Թունյանը, ուսսական գաղտնի ոստիկանության և այլ կառույցների գիտահրիզոնով անցկացնելով, բազմակողմանիորեն լուսաբանում է ՀՅԴ գործունեությունը, ինչն առ այսօր չի արվել անգամ Դաշնակցության որևիցե պատմագրի կողմից:

Վ. Թունյանը արդարացիորեն կարևոր տեղ է հատկացնում 1826 թ. Նիկոլայ I-ի կողմից Երրորդ ժանդարմական բաժանմունքի ստեղծմանը, որի կազմավորման խնդիրներից էր նաև հպատակ ժողովուրդների նկատմամբ հետախուզության իրականացումը՝ Անդրկովկասում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացները համընդհանուր վերահսկողության տակ պահելով: Այդ հետախուզական գործողությունների մեջ որոշակի տեղ էր հատկացվում նաև հայերին, որոնցից էր, օրինակ, արտաքին քաղաքական գերատեսչության ծառայությանը «հավատարմագրված» Քրիստափոր Լազարևը, որը նաև էջմիածնի Հայոց կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչն էր:

Վ. Թունյանը գրում է, որ բարեփոխումների հետ միասին, 1844 թ. ստեղծված Կովկասի փոխարքայության գլխավոր խնդիրներից մեկն էլ դարձավ երկրամասի՝ քաղաքական առումով մանրագնի հետախուզումը՝ կարևոր նշանակություն տալով գաղտնի ոստիկանության գործունեությանը, որում որոշակի տեղ էր հատկացված նաև, օրինակ, Անդրկովկասի գլխավոր վարչության պետ իշխան Վ. Բեհբուլթովին (էջ 15-16): Ուշագրավ փաստեր են բերված կաթողի-

կուս Ներսես Աշտարակեցու անձի նկատմամբ ժանդարմերիայի դրսևորած հետաքրքրություն մասին: Ներկայացված է նաև ժանդարմերիայի աշխատանքը՝ կապված, այսպես կոչված, «Շրիտասարդ Հայաստան» Հեղափոխական կազմակերպության հետ, որի նպատակն էր ազատության քարոզչությունը, հակացարական մտքերի ներչնչումը, ուսաց լեզվի նշանակության նսեմացումը և աշխարհաբարի ուսուցման արմատավորումը:

ՀՅԴ-ին առնչվող՝ Ռուսաստանյան կայսրության Հատուկ ծառայություններին՝ գաղտնի ոստիկանության գործունեությունը վերաբերող նյութերից ակնհայտ է դառնում նաև նրանց հետաքրքրությունը Ֆիդայական-Հայրենական շարժման, նրա իրական կազմակերպիչների նկատմամբ:

Վ. Թունյանի հետազոտության շնորհիվ պարզ է դառնում, որ ցարական պահնորդական բաժանմունքը և Հատուկ գաղտնի ոստիկանությունը բավականաչափ տեղեկացված են եղել նաև Ա.Կուկուկյանի խմբի գործունեության վերաբերյալ (էջ 26-28): Վ. Թունյանը, հենվելով ցարական Հատուկ ծառայությունների գործունեության տվյալների վրա, փաստում է, որ 1890-ական թթ. սկզբին Հոգևորականությունը ևս մասնակցում էր ազգային-ազատագրական շարժմանը (էջ 29-31), մասնավորապես ընդգծելով Շուշու և Կարսի Հոգևորականության ակտիվությունը:

Պատմաբանը Համակողմանիորեն բացահայտում է 1895-1896 թթ. իրադարձությունների և Արևմտյան Հայաստանի ազատագրման ապստամբական ծրագրերի վերաբերյալ ցարական ոստիկանության տեղեկացվածությունը: «Քանկ Օտոմանի» ահաբեկչության մասին հեղինակի բերած փաստերը ցույց են տալիս, որ թուրքական գաղտնի ոստիկանությունը ևս կանխավ իրազեկված էր այդ մասին, սակայն իբր թե Աբդուլ Համիդը «թուլյատրեց» այն իրականացնել՝ Եվրոպային Հայկական անջատողական բնույթի գործողությունների մեջ մեղադրանքներ ներկայացնելու և այն դատապարտելու նպատակադրումով (էջ 45-46):

Բազմակողմանիորեն լուսաբանված է ցարական ոստիկանության, Ներքին գործերի նախարարության և Հատուկ մարմինների գործունեությունը՝ այսպես կոչված, «Լիֆինյան դատավարության» հետ կապված (էջ 71-81, 118-119 և այլն), ինչն արդեն հետաքրքիր է Հիմնախնդիրը լիարժեքորեն պատմական քննության ենթարկելու տեսանկյունից:

Վ. Թունյանը ըստ ամենայնի անդրադարձել է 1905-1907 թթ. Ռուսաստանի պատմության մեջ առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությանը պայմանավորված՝ ՀՅ Դաշնակցության շարքերում առաջացած խմորումների և խառնաշփոթ վիճակի, քաղաքական մտքի բնագավառում ստեղծված քառսի վերլուծությունը, որը պարարտ Հող էր Ռուսաստանյան կայսրության Հատուկ ծառայությունների, պահնորդական բաժանմունքի գործունեության ակտիվացման համար (մասնավորապես՝ Անդրկովկասում): Ըստ այդմ, հեղինակը Հանգամանալից ներկայացնում է 1907 թ. Վիննայի կոնգրեսից հետո ՀՅ Դաշնակցության ներսում տեղի ունեցած պառակտիչ գործընթացները, կոնգրեսի կողմից այդ հակասական և բարդ իրավիճակի վերաբերյալ կուսակցության դատապարտող որոշումը, որի իրագործումը դրվեց ՀՅ Դաշնակցության թիֆլիսի կոմիտեի վրա: Հեղափոխական գործունեության ձախտման հետևանքով, որում իրենց դերակատարումն ունեին նաև Ռուսաստանյան կայսրության ներքին գործերի մարմինները, պահնորդական բաժանմունքը և առհասարակ Հատուկ ծառայություններն իրենց ծավալված քայքայիչ գործառույթներով, ըստ էության Հանգեցրին ՀՅ Դաշնակցության պատակտմանը և նոր խմբավորումների առաջացմանը (էջ 64-77, 87-93 և այլն):

Հենվելով Հատուկ ծառայությունների Հավաքած գործակալական տվյալների վրա՝ Վ. Թունյանը մի շարք արժանահիշատակ փաստեր է բերում Երևանի և Ելիզավետպոլի նահանգային ժանդարմական վարչությունների գործունեության

վերաբերյալ (էջ 73-78, 94-108): Եղբայրակիրչ մասում Հեղինակը Հաստատում է այն հին ճշմարտությունը, որ բոլոր պատմական ժամանակաշրջաններում էլ Հատուկ ծառայությունների գործողությունները լիովին պայմանավորվում են սեփական պետությունների շահերի ապահովման ռազմավարություններով, տվյալ պարագայում, Ռուսաստանյան կայսրության շահերից ելնելով, որոշակի ջանքեր են գործադրվել տեղեկացված իննելու անդրկովկասյան ժողովուրդների մեջ ընթացող տարաբնույթ գործընթացների, այդ թվում՝ քաղաքական խմորումների և կազմակերպությունների հեղափոխական ու հակահինքնակալական տրամադրությունների մասին:

Վ. Թունյանը մի շարք հետաքրքիր փաստեր է բերում Հայոց եկեղեցու (էջ 98-99, 107) և հեղափոխական սոցիալիստական կուսակցությունների (էջ 105-106, 108-109) դեմ ծավալած՝ դադտնի ոստիկանության գործունեությունից:

Աշխատության վերջնամասում առանձնացվում են Ռուսաստանյան կայսրության ժանդարմերիայի և ոստիկանության դեպարտամենտի գործունեության երկու փուլ՝ 1826-1880 թթ. և 1880-1917 թթ.: Առաջին փուլում, ինչպես նկատում է Վ. Թունյանը (էջ 123), Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի դեմ ռազմական գործողությունների ընթացքում իրագործվել է հետախուզություն և հակահետախուզություն, իսկ անդրկովկասյան պատերազմների ավարտից հետո գլխավոր ուշադրությունը բևեռվում է իրադրության վերլուծության և գործակալական Հաղորդագրական բնույթի տեղեկագրեր կամ ամփոփագրեր կազմելու վրա: 1836 թ., Անդրկովկասում ժանդարմական օկրուգի կազմավորումից հետո, ցարական իշխանությունները զնացին այլ ուղիով՝ ստեղծեցին գործակալական արդյունավետ գործող ցանց: Երկրամասում Կովկասի փոխարքայության նահանգալիս կառավարման համակարգի ստեղծումը հանդեսրեց ժանդարմերիայի կառույցի գործնական ցանցի ընդարձակմանը, որն իր ներկայացուցչությունները ստեղծեց երկրամասի յուրաքանչյուր հնարավոր վարչամասում: Ժանդարմերիայի ընդհանուր խնդիրների մեջ մտան անդրկովկասյան ազգերի աղնվական դասերի տրամադրությունների մասին տեղեկատվության ձեռքբերումը, կառավարական ու վարչական օղակների և եկեղեցու հետ նրանց կապերի մասին ճշգրիտ փաստերի իմացությունը:

Երկրորդ փուլն արտացոլում է քննչական մարմինների հակահեղափոխական գործունեությունը: Թունյանը փաստում է, որ հետաքննության Հատուկ առարկա էին Հայկական հարցը և Հայ քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև բռնությունները Հայ եկեղեցու և մտավորականության նկատմամբ:

Այսպիսով, այս արժեքավոր մենագրությունը թարմ իտուք է Հայ պատմագիտության մեջ: Ուսումնասիրությունն, անշուշտ, առավել կշահեր, եթե Հարբատայի իրադարձություններով հաղեցած այդ պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ արխիվային նոր նյութերով: Աշխատության մեջ անդրկովկասյան տարածաշրջանի և Արևելյան Հայաստանի պատմաքաղաքական զարգացման հիմնախնդիրներն առաջին անգամ քննական հետազոտության են ենթարկվել մեկ այլ կտրվածքով՝ ելնելով Ռուսաստանյան կայսրության Հատուկ ծառայությունների, դադտնի ոստիկանության և այլ կառույցների գործունեության վերլուծության մեկնակետից:

ՎԻՐԱԲՅԱՆ Վ. Հ.

Պատմական գիտությունների դոկտոր